

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏԲ Է ՄՇԱԿՈՒԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՈՎ.

Դպրոցը միայն մի միջոց ունի, որով կարող է որոշել իւրաքանչիւր երիտասարդի գիտութեան և պատրաստութեան չափը. այդ նորա համար որոշուած ուսման ծրագիրն է, որի ամբողջովին իւրացնելն ու աւարտելն արդէն նշան է, թէ նա մտաւոր որոշ պաշար ունի, թէ նա մի յայտնի չափով պատրաստութիւն ունի կեանքի մէջ մտնելու: Թէև այդ չափը, այդ ծրագիրը, որով որոշուած է մէկի մտաւոր հասունութիւնը, խիստ կամայական, փոփոխական ու վիճելի է՝ հարց է շատ դէպքում, թէ նա որքա՞ն է կարողացել պատրաստել երիտասարդին, բայց և այնպէս այդ ձևը հնուց ընդունուած և մշակուած է և համարուում է կատարելապէս վստահելի. այն երիտասարդն է մտաւոր հասունացած, որ ըստ պահանջման ներկայացրել է գրաւոր շարագրութիւն, կամ թէ չէ քննութեան ժամանակ պատասխանել է այս կամ այն պատահական հարցին: Այսպիսով մենք կարողանում ենք որոշել մէկի գիտութեան չափը, եթէ ոչ ամբողջովին, դո՛նէ մօտաւորապէս և դորա համար էլ վկայել: Բայց բոլորովին այլ է բարոյական դաստիարակութեան խնդիրը. մեր դպրոցական հաստատութիւնների մէջ սորա նկատմամբ կամ համարեա ոչինչ չի արուում և կամ արուածը որ և է միութիւն ու հետեւողականութիւն չունի իւր մէջ, ըստ մեծի մասին իրար հակասող հայեացքներ ենք գտնում այստեղ, իրար հակառակ ձգտումներ, նպատակներ ու գաղափարներ. կարծէք թէ ծնողներն իրանց որդւոց ներշնչում են. «Սովորեցէ՛ք, հնաղանդուեցէ՛ք, կեղծաւորեցէ՛ք, շողորթութեցէ՛ք, լուեցէ՛ք, միայն թէ աւարտէք դպրոցը և վկայական ստանաք»: Քրիստոնէական սիրոյ գաղափարը

աւանդուում է այստեղ կեանքի եսական խմաստութեան հետ ի միասին. «Ապրիլը աշխարհիս մէջ Աստուծոյ և ընկերի համար, բայց աշխատիր մարդ դառնալ և քեզ համար լաւ պաշտօն ստեղծել»: Մանկավարժների բոլոր ճիգը, ցոյց տալու թէ ստախոսութիւնը փնաստկար է, մնում է ապարդիւն շրջապատի կեանքի օրինակների առաջ, ուր ամէն ինչ հիմնուած է ստի, կեղծաւորութեան ու բռնութեան վերայ: Ծընօղներից ո՞րն արդեօք կարող է դաստիարակել իւր որդուն այնպէս, որ նա երբէք չստէ, որ իւր խղճին հակառակ չը գնայ, որ միշտ իւր սրտի լաւ զգացումներին նուիրուի, որ ինքը հրաժարուելով երկրային կեանքի բարիքներից, աշխատէ բարիք պատճառել ուրիշներին: Դաստիարակել իսկական քրիստոնէական հոգւով, նշանակում է նոցա մեծամասնութեան հայեցակէտից, տանել որդուն դէպի կորուստ: Այսպէս, եթէ փոխանակ իւր համար հարստութիւն զիջելունա իւր ունեցածը չունեորներին բաժանէ, փոխանակ ուրիշների օգնութեամբ զանազան ներելի և աններելի ճանապարհներով իւր համար հանգիստ պաշտօն դանելու, առանց կռուի զիջանէ իւր անդը մի ծանօթ աղքատ մարդու, բոլորը նրան կորած կհամարեն: Ո՞վ կասէ որդուն. մի՛ շողոքորթիր, մի՛ գործադիր խորամանկ միջոցներ, քաղաքագիտական ոլորապտոյտ ճանապարհներ, որ դիւրե ունեցող մարդուն քո կողմը դրաւես և նորա շնորհիւ քո դրութիւնը բարւոքես. այլ ընդհակառակը ճշմարտութեան պաշտպան կանգնիր, բաց արա՛ չարագործութիւնը, մարակիր կեղտերը և ստութիւնները և երբէք մի՛ մտածիր թէ քեզ կարող են գուրս քշել և գու ու քո ընտանիքը կմնաք առանց մի կտոր հացի: Սիրող ծնօղներից ո՞վ արդեօք կառաջնորդէ իւր որդուն դէպի մի այսպիսի յեղյեղուկ կեանք, ո՞վ այսպէս կհասկանայ դաստիարակութեան պահանջները:

Գրեթէ ոչ ոք:

Ծնօղների վերջնական ցանկութիւնն ու ձգտումը կարելի է արտայայտել երկու խօսքով՝ «մարդ դարձնել», դորահամար են չարչարուում հայրերն աւ մայրերը և դորա յաջողուիլն է նոցա մխիթարում իրանց ծերութեան հասա-

կուճ, իսկ անյաջող ելքը՝ դժբախտ դարձնում: Մարդ դարձրնել, նոցա հասկացողութեամբ նշանակում է մոցնել որ և է մի գպրոց—մինչև համալսարանը, և տպա մի պաշտօնի դրնել: հասնելով այս նպատակին ծնողները հպարտութեամբ ասում են. «մենք մեր ամբողջ կեանքը գործադրեցինք մեր որդիներին դաստիարակելու համար, և փառք Աստուծոյ մարդ դարձրինք նոցա»: Իսկ եթէ հարցնէք, թէ ի՞նչ է եղել ձեր դաստիարակութիւնը, ի՞նչ գաղափարներով էք առաջնորդուել այդ ծանր գործի մէջ, ի՞նչ իդեալների էք ձգակել, ի՞նչ միջոցներ էք գործադրել—այդ հարցերով դուք նոցա դժուար դրութեան մէջ կղնէք. նոքա գուցէ ձեզ կասեն, որ լգահպանել են իրանց որդւոց առողջութիւնը, որ աշխատել են բաւականութիւն պատճառել նոցա, որ փող չեն խնայել ամեն բան գնելու, որ դաստիարակներ են վարձել, խնձոյքներ կադմել, ուսման են տուել, սովորեցրել են լսել մեծերին և յարգել դաստիարակներին, կարգացել են նոցա համար գեղարուեստական երկեր և զարգացրել նոցա մէջ գեղեցկի զգացումը Վայց գաղափարներ նոքա ո՞չ մի գաղափարի չեն հեռուել: Ամենագլխաւոր և վերջնական ապացոյցը ծնողների համար այն է եղել, որ իրանց որդւոց բարեգործ դարձնելու համար ասել են. «Եթէ կլինիս որդւոց բարեգործ դարձնելու համար ասել են. «Եթէ կլինիս համեստ, ուշադիր և աշխատասէր, լաւ կլինիս հակառակ դէպքում քեզ կհեռացնեն գպրոցից և դու ստիպուած կը լինիս ուրիշի մօտ հասարակ ծառայութեան մօտել: Ահա նոցա դաստիարակութեան հիմնական ամենաազդեցիկ գաղափարը:

Այս կերպ դաստիարակուած մանուկը կարգում է լաւ գրքեր, լսում է պատուի պարտականութեան խղճի և սիրոյ մասին խելացի խօսակցութիւնների, առգորուում է բարձր գաղափարներով և վերջապէս ինքն էլ սկսում է խօսակցել, սովորում է ուրիշներին քննադատել, ճաճան ֆրազներ գործածել, յուսադրում է իրան մութ հայեացքներով և համարձակուում է համարել իրան կրթուած մարդ, կանոնաւորութեան տիպար, ներկայացուցիչ հասարակութեան բարձր դասակարգի, ինչ որ իդեալներ ունեցող: Եւ այն

Համարուում է նորա բարոյական դաստիարակութիւնը. իսկ նորա իս'ական բարոյական պաշարը կազմուում է այն արքներէից ու գործերէից որ ոչ մի ընդհանուր բան չունին գործածած Ֆրազներէի հետ. նա և՛ խաբել է և՛ երեսպաշտութիւն է արել և՛ հպարտացել է. նա եսասէր է, փչացնող — մի խօսքով այն ամէնն է, ինչի դէմ խօսքով կայծակ ու որոտ կ'թափէր, իբրեւ անկարգութիւն ու ստորութիւն կնշաւակէր: Երիտասարդ մարդկանցից շատերը կեանքի սպարէդ են իջնում այնպիսի բարոյական պաշարով, որի սպացոյցն է մեր ուսանող երիտասարդութեան բարոյական ըմբռնման ստոր աստիճանը և դորա համապատասխան հասարակութեան ներկայացրած բարոյական դրութիւնը:

Այժմ աւելի յաճախ են հանդէս գալիս երիտասարդութեան մէջ առերեւոյթ լաւ վարքով, քաղաքավարի, դատող ու լուրջ անձինք. նոքա պահում են իրանց կանոնաւոր, կարգում են թերթեր և իրանց արժանապատուութիւնը չեն կորցնում: Դա, այսպէս կոչուած, լաւ դաստիարակուած երիտասարդութիւնն է, որը ծնողների և՛ բախտաւորութիւնը և՛ փառքն է կազմում: Բայց մենք չպիտի խաբուենք դոցա արտաքինով, որի ներքեւ ծածկուում է կատարեալ դատարկութիւն. նոքա յաճախ զուրկ են ամեն մի ուղղութիւնից, կենդանի ու ջերմ զգացումից, և սառն են ծերունու պէս, ժլատ ու եսասէր: Եթէ մեզ թոյնէին ընտրութիւն անել, մենք աւելի կգերադասէինք նորան, որն ունի անսահման եռանդ թէ՛ լաւ և թէ՛ վատ բաներում, որի մէջ թէ՛ և պակասութիւններ շատ կարող են լինել, բայց և հետը մի անփոխարինելի արժանաւորութիւն կայ — վառ վռուկ, գործող երիտասարդական թարմութիւն: Այլ չէ կորցրել երիտասարդութիւնը, նորանից դեռ կարող է կենդանի մարդ դուրս գալ, բայց հոգւով երիտասարդ ծերունին անյոյս և տխրալի երեւոյթ է, չնայելով նորա մէջ երեւացող բոլոր առաւելութիւններին:

Որքան էլ տարօրինակ է թուում այն հանգամանքը, որ դաստիարակների երկար գործունէութիւնը, նոցա հեղողութիւնը — օրինակով, համոզմունքներով ու պատիժներով

սաների բնաւորութեան վրայ ազդելու ջանքը՝ արտայայտուում է դպրոցից ելնելուց յետոյ այն անորոշ ու առաձգական բանաձևով, թէ նա «դուլելի վարք» ունի, բայց և այնպէս այս լակոնական արտայայտութիւնը շատ լաւ որոշում է բարոյական դաստիարակութեան գործունէութեան դրութիւնը: Նշանակում է՝ ոչ մի բանի չէ հասած և չի էլ կարելի հասնել, դասատու ուսուցիչները այնքան էին գրաւուած իրանց առարկայով, որ դաստիարակութեան մասին ոչ ոք ոչինչ չէ մտածել: Դաստիարակութիւն չպիտի համարել այն միջոցները, որոնք գործադրուում են դասի ժամանակ կարգը պահպանելու համար, որովհետեւ ուսուցիչը, որ դասի յաջող ընթացքի համար է մտածում, թանգ է գնահատում ամէն մի բոպէն, նա ժամանակ չունի բարոյական խրատներ կարդալու, անկարգութեան պատճառների խորքը թափանցելու: Աշխատանքն ըստ ինքեան ամենամեծ դաստիարակչական ոյժն է, երբ մտածուած է, խելացի է և լուրջ. անգործութիւնն՝ ընդհակառակն, ամէն կեղտոտութեանց աղբիւր է դառնում: Ուստի բարոյական դաստիարակութեան ասպարիզում աշխատանքից շեղուիլը բոլորովին անօգուտ է և ոչ ցանկալի, իսկ ուսուցիչ և աշակերտ իրար պատահում են միայն դասերի ժամանակ, ուրիշ ժամանակ նորա հաղորդակցութիւն չունին: Միթէ՞ յիրաւի այսպէս էլ պիտի լինի մի՞թէ պէտք է պահել սաների և դաստիարակների մէջ այդ յարաբերութիւնը, որն անկարելի է դարձնում իսկական դաստիարակութիւնը, ի հարկէ՝ ոչ: Դասերից դուրս աշակերտների և դաստիարակների իրար մօտենալը մի ցնորք է, որի իրականանալը հեռու ապագայի գործ է, — այն վարդազոյն ապագայի, որով իրենց միտքերում են դադափարականներն ու լաւատեսները, ներկայումս միայն կարելի է համեստ պահանջներով բաւականանալ: Լաւ կրթիչներ գոնէ եթէ ուսուցիչների դասատուութիւնը և ուսման առարկան դաստիարակչական ազդեցութիւն ունենային աշակերտների վրայ: Դժբախտաբար իրականութիւնը դժհացում չի տալիս և այս համեստ պահանջին: Դասարանական շատ դասերի ժամանակ մանուկները ձանձրոյթից և անգործու-

Թիւնից յոգնում են, տնային աշխատանքները կատարում են առանց հետաքրքրութեան և նոյն իսկ զգուանքով։ շատ հազուադիւրս դէպքում նոքա աշխատում են դիտակցաբար, այն եւս երբ սէր ունին դէպի այս կամ այն առարկան։ Իրանք դաստիարակները մեծ մասամբ կենդանի աշխատանքի օրինակ չեն տալիս։ Նոցանից շատերը խիստ ձեռականօրէն են կատարում իրանց պաշտօնը։ Ի հարկէ այսպիսիներից չի կարելի սպասել, որ օգտուեն իրանց առարկայից դաստիարակչական տեսակէտով՝ աշակերտների բարոյականը բարձրացնելու։ Այսպէս, ազգային զբաղանքութեան գեղեցիկ նմուշները, որոնք կարգացում և աւանդում են դպրոցում, ազգային և ընդհանուր պտտմութեան կրթիչ նշանակութիւն ունեցող դէպքերը, նշանաւոր մարդկանց օրինակելի կենսագրութիւնը, յունաց և հռովմայեցւոց դասական գործերը, որոնք ահագին դաստիարակչական նշանակութիւն են ունեցել ժամանակին և ունին այժմ, բոլորը կանցնեն առանց որ և է հետք թողնելու սանի սրտի ու զգացման մէջ, և նա դարձեալ կաւարտէ «ոյժ գովելի» վարուք։

Դաստիարակութեան կեղծ եղանակի հետեւանքը պարզ երևում է նաև նորանից, որ դաստիարակներն ուսումնարաններում ու ընտանիքներում չեն քաշուում սովորեցնելու այն, ինչ որ իրանք չեն հասկանում և կամ հասկանալով չեն կատարում։ Բարոյականութեան քարոզիչը նախ ինքը պէտք է մաքրուի, հակառակ դէպքում պէտք է փարիսեցիութիւն անէ, և անխուսափելի կերպով կրօնուրի դորա մէջ։ Նա, ով ստիպուած է օրը տասն անգամ ստել ու թափնուել, իրաւունք չունի մանկանց ասելու. «Սուտ մի՛ խօսէք, մի՛ թագնուէք, որովհետև ստախոսութիւնը վատ է, թագնուիլը զգուելի»։ Այս հանդամանքը շատ լաւ նկատում են իրանք աշակերտները, ուստի և այսպիսի ուսուցիչների բարոյական խրատները հնչում են դատարկ տալաճութեան մէջ, առանց որ և է օգտի։

Դժուար թէ գտնուի մէկը, որը համաձայնի հաստատելու, որ ներկայ ընտանեկան ու դպրոցական դաստիարակութիւնը գտնուում է իւր բարձրութեան վերայ, սորա

տխուր երևոյթները շատ պարզ են, ակնյայտի և յուսա-
հատական: Չպիտի չարիքը քողարկել, չպիտի փակել աչքը
նորա առաջ, չպիտի արդարացնել այն՝ զանազան ենթադրու-
թիւններով ու «անխուսափելի անհրաժեշտութիւն է» ասե-
լով, այլ պիտի մտածել միջոցներ ձեռք առնելու, որ եթէ
ոչ ամբողջովին հեռացուի, դոնէ կամաց կամաց փոքրանայ:
Գորա համար հարկաւոր է նախ որոշ նպատակ դնել, թող
այդ նպատակը շատ ընդարձակ և երեւակայական չլինի, բայց
հասկանալի լինի: Թող իւր պարզութեամբ մօտենայ դոնէ
այն նպատակին, որը որոշուած է մտաւոր դաստիարակու-
թեան գործի համար: Թողնել բարոյական դաստիարակու-
թեան գործը այնպէս ինչպէս կայ, այսինքն խօսքերով որո-
շել միայն նորա բարձր նշանակութիւնը, իսկ գործով ոչ
միայն չձգտել նորան իրականացնելու, այլ ընդհակառակն
հակասել նորան, նշանակում է իրօք ոչ մի նշանակութիւն
չտալ նորան: Յիրաւի հէնց այդպէս էլ է. ծնողների և ու-
սուցիչների մեծամասնութիւնը միայն խօսում է, որ բարո-
յական դաստիարակութիւնը կարեւոր է, իսկ իրականութեան
մէջ գորա համար ամենեւին չի աշխատում: Բայց նա, ով որ
լուրջ և անկեղծ սրտով հետաքրքրուում է երիտասարդների
բարոյական դաստիարակութեամբ, ոչ թէ պիտի խօսէ միայն,
բաւականանայ դատարկ Ֆրապներով, այլ պիտի կատարէ
մի գործ, որը քիչ ու շատ պտուղ կարող է տալ: Եթէ ու-
րիշներին սովորեցնում ենք այն միայն, ինչ որ մենք զի-
տենք, դաստիարակել կարող ենք նոյնպէս միայն այն զգա-
ցումներով, որ կրում ենք մեր սրտերում, այս խօս-
քերը յաճախ պիտի կրկնել մեր դաստիարակների ականջին,
որոնք աշխատում են փթած գերաններից հաստատուն տուն
շինել:

Դաստիարակի պարտքն է ուրեմն ընտրել այն գեղեցիկ
ձգտումները, որ ունի իւր սրտում, փայփայել, պահպանել,
զարգացնել և ապա թէ տալ իւր սաներին, աւելին անել
նա չի կարող: Ոչ որին արգելուած չէ կատարելութեան դի-
մելը. ընդհակառակն դա իւրաքանչիւրի պարտքն է, աւելի
ևս դաստիարակի: Ուստի եթէ ինքը ցանկանում է, որ իւր

որդիները կամ սաները բարձր լինին իրենից, պէտք է աշխատէ նախ իւր քնաւորութիւնը կազմակերպել, արմատախիլ անել իւր վատ հակումները և ձեռք բերել բարի ձրդտումներ. այն ժամանակ նա կտայ մանկանց ոչ միայն ոյժի մեծ պաշար, այլ որ բարոյական տեսակետից աւելի կարեւոր է՝ կսովորեցնէ նրանց իւր օրինակով ինքնակատարելութեան դիմելու, միշտ առաջ գնալու, որն և կազմում է մարդու բարձր կոչումը. նորա երկրաւոր կեանքի ընթացքում: Սորանից պարզ երևում է, որ չի կարելի գծել դադարի համար գործնական մի սահման, որին պիտի ձգտէ բարոյական գաստիարակութիւնը ընդհանրապէս բոլոր մարդկանց համար. ամէն մէկը պէտք է կատարէ գոնէ այնքան, որքան թոյլ են տալիս իւր ոյժերը:

(Քաղեց) Ա. Շահնազարեան

(Շարունակելի)



ՄԵՐ ՄԱՄՈՒԼԸ.

Կվերցնենք այս անգամ «Մուրճ»ի ներկայ թուականի առաջին երեք համարները: Հաճելի է թերթել այդ ստուար, քաղմակողմանի քովանդակութիւն ունեցող տետրակները. զգում ես, որ դրական, մտածող, իրենց շուրջը դիտող մարդոց հետ զործ ունիս, որ այնչափ էլ ողորմելի չէ եւ անմխիթարական մեր հրապարակային կեանքը, ինչպէս սովորաբար պատկերացնում ենք ու հաւատացնում մեզ եւ ուրիշներին. զրական ասպարիզի վերայ մի բան կատարում է, ցրուած ուժերը կամաց կամաց սկսում են կարծես համախմբուիլ, նոր մարդիկ են հանդէս գալիս՝ նոր պահանջներով, ընդհանուր զործի համար միասին գործելու